

«ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»

*ունիվերսալ վարկային կազմակերպություն
առևտրային կոոպերատիվ*



“FARM CREDIT ARMENIA”

*universal credit organization
commercial cooperative*

ք. Երևան 0052, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16, հեռ. (+37410) 55-08-31, (+37410) 55-07-41, ՀՎՀՀ 00447635, www.fca.am
9/16 Tbilisyan Highway, Arabkir, 0052 Yerevan, tel. (+37410) 55-08-31, (+37410) 55-07-41, TIN 00447635, www.fca.am

Գլխավոր Գործադիր Տնօրենի Հրաման 250Ն

**«ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՎԿ ԱԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

01 հոկտեմբերի 2024 թ.

ք. Երևան

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ կողմից իրականացվող գործառնությունների սակագները՝ համաձայն հավելվածի,
2. Սույն հավելվածն ուժի մեջ է մտնում 2024 թ. հոկտեմբերի 3-ից,
3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Գլխավոր Գործադիր Տնօրենի 187Ն հրամանը առ 25.07.2024 թ.:

Գլխավոր գործադիր տնօրեն՝

Արմեն Գաբրիելյան



ք. Երևան 0052, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16, հեռ. (+37410) 55-08-31, (+37410) 55-07-41, ՀՎՀՀ 00447635, www.fca.am
9/16 Tbilisyan Highway, Arabkir, 0052 Yerevan, tel. (+37410) 55-08-31, (+37410) 55-07-41, TIN 00447635, www.fca.am

Հավելված
Հաստատված է «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ
Գլխավոր Գործադիր Տնօրենի
2024թ.-ի հոկտեմբերի 1-ի N 250Ն հրամանով
Խմբագրության հերթական համարը՝ 84

Ուժի մեջ է՝ 03.10.2024թ.-ից

«ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈւՎԿ ԱԿ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԵՐ

1.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿ

Արժույթ	Գումար ¹	Տարեկան տոկոսադրույք	Ժամկետ	Վարկի սպասարկման վճար ²	Ապահովվածություն
ՀՀ դրամ	1.000.000 – 40.000.000	10 % – 14.4 %	3 - 120 ամիս	Վարկի գումարի 0 – 0,1 % ամսական՝ կախված ֆինանսավորման աղբյուրից	Գրավ, երաշխավորություն
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	9 % – 12 %			

1.2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՐԶ ՎԱՐԿ

ՀՀ դրամ	1.000.000- 5.500.000	10 % – 14.4 %	3 – 60 ամիս	Վարկի գումարի 0 – 0,1 % ամսական՝ կախված ֆինանսավորման աղբյուրից	Երաշխավորություն
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	9 % – 12 %			

1.3 ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՄՇԱԿԱՐՈՒՅՄԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒՄԻՂԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԱՐԿԵՐ³

ՀՀ դրամ	1.250.000 – 40.000.000	12 % - 14.4 %	3 - 96 ամիս	Չի պահանջվում	Գրավ և/կամ երաշխավորություն
---------	------------------------	---------------	-------------	---------------	-----------------------------

1.4 ՎԱՐԿ «ԱԶԱԿԻՑ»

ՀՀ դրամ	100.000 – 3.000.000	0 %	1 - 7 ամիս	Վարկի գումարի 2.5 % ամսական	Չի պահանջվում
---------	---------------------	-----	------------	-----------------------------	---------------

1.5 ՎԱՐԿ «ՈՆԻՎԵՐՍԱԼ»

ՀՀ դրամ	100.000 – 30.000.000	21.9 % - 23.9 %	8 - 60 ամիս	Վարկի գումարի 0,15 % ամսական	Գրավ և/կամ երաշխավորություն
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	14 % - 18 %			

1.6 «ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՐՈԴՈՒԿՏ»

ՀՀ դրամ	1.000.000 – 40.000.000	2.5 % - 8 %	3 – 84 ամիս	Չի պահանջվում	Գրավ և/կամ երաշխավորություն
---------	------------------------	-------------	-------------	---------------	-----------------------------

2. ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԵՐ

2.1. ՓՄՁ ՎԱՐԿ³

ՀՀ դրամ	1.000.000 – 40.000.000	9.55 – 14.4 %	3 - 120 ամիս	Վարկի գումարի 0 - 0,1 % ամսական՝ կախված ֆինանսավորման աղբյուրից	Գրավ, երաշխավորություն
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	9 % - 12 %			

2.2. ՓՄՁ ՓՈՔԻ ՎԱՐԿ^{3, 8}

ՀՀ դրամ	1.000.000 – 5.500.000	9.55 – 14.4 %	3 - 120 ամիս	Վարկի գումարի 0 - 0,1 % ամսական՝ կախված ֆինանսավորման աղբյուրից	Երաշխավորություն
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	9 % - 12 %			

2.3. ԱԳՐՈՒԲԻԶՆԵՍԻ ՎԱՐԿ

ՀՀ դրամ	1.000.000 – 70.000.000	10 % – 14.4 %	3 – 84 ամիս	Վարկի գումարի 0 - 0,1 % ամսական՝ կախված ֆինանսավորման աղբյուրից	Գրավ և/կամ երաշխավորություն
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	9 % - 12 %			

2.4. ՎԱՐԿ «ԱԶԱԿԻՑ»

ՀՀ դրամ	100.000 – 3.000.000	0 %	1 - 7 ամիս	Վարկի գումարի 2.5 % ամսական	Չի պահանջվում
---------	---------------------	-----	---------------	--------------------------------	---------------

2.5. ՎԱՐԿ «ՈՆԻՎԵՐՍԱԼ»

ՀՀ դրամ	100.000 – 30.000.000	21.9 % - 23.9 %	8 - 60 ամիս	Վարկի գումարի 0,15 % ամսական	Գրավ և/կամ երաշխավորություն
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	14 % - 18 %			

3. ԼԻԶԻՆԳ³

3.1. ԼԻԶԻՆԳ⁴

ՀՀ դրամ	300.000 – 40.000.000	9.55 - 23.9 %	6 - 120 ամիս	Չի պահանջվում	Կարող է պահանջվել գրավ և/կամ երաշխավորություն
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	9 % - 18 %			

3.2. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԼԻԶԻՆԳ⁵

ՀՀ դրամ	300.000 – 40.000.000	9.55 - 14.4 %	3 – 120 ամիս	Չի պահանջվում	Կարող է պահանջվել գրավ և/կամ երաշխավորություն
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար	9 % - 12 %			

4. ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՎԱՐԿԵՐ

4.1. ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՎԱՐԿ³

ՀՀ դրամ	1.000.000 – 35.000.000	10 % – 22 %	12 - 72 ամիս	Վարկի գումարի 0 - 0,1 % ամսական՝ կախված ֆինանսավորման աղբյուրից	Գրավ, երաշխավորություն
---------	------------------------	-------------	-----------------	--	---------------------------

5. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԱՐԿԵՐ

5.1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԱՐԿ ³

ՀՀ դրամ	300.000 – 4.000.000	9.55 % - 15 %	36 - 84 ամիս	Չի պահանջվում	Գրավ և/կամ երաշխավորություն
---------	---------------------	---------------	-----------------	---------------	--------------------------------

6. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐ

6.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՎԱՐԿ

ՀՀ դրամ	1.000.000 – 15.000.000	19.9 % –23.9 %	12 – 120 ամիս	Վարկի գումարի 0,15 % ամսական	Գրավ, երաշխավորություն
---------	------------------------	----------------	------------------	---------------------------------	---------------------------

ՎԱՐԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ՏՈՅԺ ⁵

Հ/Հ	Վարկատեսակ	Տոյժի չափը
1.	Գյուղատնտեսական վարկեր	5.000.000 ՀՀ դրամը (կամ համարժեք արտարժույթը) գերազանցող պայմանագրային գումարով վարկերն ամբողջությամբ մարելիս վարկառուն վճարում է պայմանագրով նախատեսված 90 օրվա տոկոսագումարի և վարկի վերջնական մարման օրվա դրությամբ փաստացի վճարված տոկոսագումարների դրական տարբերությունը:
	Ագրոբիզնեսի վարկ	
2.	Բիզնես վարկեր (բացառությամբ Ագրոբիզնեսի վարկը)	5.000.000 ՀՀ դրամը (կամ համարժեք արտարժույթը) գերազանցող պայմանագրային գումարով վարկն/լիզինգն ամբողջությամբ մարելիս վարկառուն/լիզինգառուն վճարում է պայմանագրով նախատեսված 180 օրվա տոկոսագումարի և վարկի/լիզինգի վերջնական մարման օրվա դրությամբ փաստացի վճարված տոկոսագումարների դրական տարբերությունը:
	Լիզինգ	

ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/Հ	Գործառնության նկարագրություն	Սակագին
1.	Հաճախորդի դիմումի հիման վրա գործող վարկի, լիզինգի պայմանների (բացառությամբ գրավների փոփոխության) վերանայում ⁶	15.000 ՀՀ դրամ յուրաքանչյուր պայմանագրի համար
2.	Հաճախորդի դիմումի հիման վրա գործող վարկի, լիզինգի անշարժ գույքի գրավի արգելանքից ազատում, գրավի առարկայի փոփոխություն, գրավի առարկայի սեփականատիրոջ փոփոխություն, գրավի առարկային վերաբերվող այլ փոփոխություններ ⁶	20.000 ՀՀ դրամ յուրաքանչյուր պայմանագրի համար
3.	Հաճախորդի դիմումի հիման վրա գործող վարկի, լիզինգի շարժական գույքի գրավի արգելանքից ազատում, գրավի առարկայի փոփոխություն, գրավի առարկայի սեփականատիրոջ փոփոխություն, գրավի առարկային վերաբերվող այլ փոփոխություններ ⁶	10.000 ՀՀ դրամ յուրաքանչյուր պայմանագրի համար
4.	Գրավի առարկան վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու համաձայնության տրամադրում	5.000 ՀՀ դրամ
5.	Հաճախորդի դիմումի հիման վրա գործող վարկի, լիզինգի երաշխավորության փոփոխություն, դադարեցում	10.000 ՀՀ դրամ յուրաքանչյուր երաշխավորի համար
6.	Պարտավորությունների մասին և այլ բովանդակությամբ տեղեկանքի տրամադրում	5.000 ՀՀ դրամ
7.	Վարկի գումարի բանկային փոխանցման միջնորդավճար ⁷	3.000-60.000 ՀՀ դրամ՝ կախված սպասարկող բանկի սակագնից
8.	Աուդիտորական հարցման պատասխանի տրամադրում	10.000 ՀՀ դրամ

1. «Հագարամյակի մարտահրավերներ հիմնադրամի» (այսուհետ՝ ՀՄՀ) միջոցներով մեկ փոխառուին տրամադրված, տրամադրվող վարկերի/լիզինգների հանրագումարը չի կարող գերազանցել 30.000.000 ՀՀ դրամը:
«Անշարժ գույքի գրավով ապահովված վարկի» ապահովման միջոցը մարզային բնակավայրում գտնվելու դեպքում վարկի գումարը չի կարող գերազանցել 10.000.000 ՀՀ դրամը:

2. Վարկի սպասարկման վճար պահանջվում է միայն ՀՄՀ միջոցներով, ԳԶՄՀ-ից փոխառության տրամադրման հայտային եղանակով ներգրավված միջոցներով և սեփական միջոցներով տրամադրված վարկերի դեպքում:
Վարկի սպասարկման վճարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:
Վարկի սպասարկման վճարի մարումները սահմանվում են տվյալ վարկի մարումների ժամանակացույցով սահմանված վարկի և/կամ տոկոսի յուրաքանչյուր մարման օրը՝ բացառությամբ «Վարկ Աջակից» վարկատեսակի վարկերի, որոնց դեպքում վարկի սպասարկման վճարների մարումների համար կարող է սահմանվել նաև ամսական ժամանակացույց՝ անկախ վարկի և/կամ տոկոսների մարումների օրերից:

Սպառողական կոոպերատիվների վարկավորման դեպքում՝ անկախ ֆինանսավորման աղբյուրից, վարկի սպասարկման վճար չի պահանջվում:

3. «Ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով» տրամադրվող վարկերի տոկոսները սուբսիդավորվում են հետևյալ չափերով.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տնտեսավարողներին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիներին, գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներին (18-35 տարեկանը չլրացած ֆիզիկական անձանց (վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահին), այգեհիմնման և (կամ) ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման կամ ընդլայնման դեպքում նաև գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրողներին՝ 14 տոկոսային կետով:
- Առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման կամ ընդլայնման համար՝ 12 տոկոսային կետով,
- Մնացած վարկերի դեպքում՝ 9 տոկոսային կետով,
Ընդ որում, սուբսիդավորման տոկոսային կետը չի կարող ավելի լինել, քան տրամադրվող վարկի տոկոսադրույքը:

Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի սուբսիդավորման ծրագրի շրջանակներում լիզինգը տրամադրվում է 3-72 ամիս ժամկետով, առավելագույնը 14 % անվանական տոկոսադրույքով, իսկ տոկոսները մասամբ կարող են սուբսիդավորվել պետության կողմից, որի արդյունքում լիզինգառուսն վճարում է 2 % տարեկան, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների և զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության իրականացման կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիների համար լիզինգի տոկոսները սուբսիդավորվում են ամբողջությամբ:
Ազրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի սուբսիդավորման ծրագրի շրջանակներում լիզինգը տրամադրվում է 3-60 ամիս ժամկետով, իսկ տոկոսները մասամբ սուբսիդավորվում են պետության կողմից՝ մինչև 10 տոկոսային կետ ՀՀ դրամի դեպքում և մինչև 6 տոկոսային կետ՝ ԱՄՆ դոլարի դեպքում, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի տոկոսները սուբսիդավորվում են ամբողջությամբ:

«Տնտեսության արդիականացման միջոցառում» ծրագրով տրամադրված սարք, սարքավորումների, բաղկացուցիչ մասերի վարկի/լիզինգի տոկոսադրույքը սուբսիդավորվում է 42 ամսվա ընթացքում՝ լիզինգի դեպքում 10 տոկոսի չափով, իսկ վարկերի դեպքում՝ 8 տոկոսի չափով:

«Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության» ծրագրով տրամադրվող վերանորոգման վարկերի տոկոսները սուբսիդավորվում են հետևյալ չափերով.
- Սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրում վերանորոգվող գույքի մասով՝ տարեկան 14 %,
- Սահմանամերձ բնակավայր չհանդիսացող գյուղական բնակավայրում վերանորոգվող գույքի մասով տարեկան՝ 12 %,
- Սահմանամերձ բնակավայր չհանդիսացող քաղաքային բնակավայրում վերանորոգվող գույքի մասով՝ տարեկան 11 %,
- Երևան քաղաքում վերանորոգվող գույքի մասով՝ տարեկան 9 %:

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» միջոցներով տրամադրվող վարկի տարեկան տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ դրամի դեպքում 11 %-ը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW բանկի (այսուհետ՝ KfW) կողմից ֆինանսավորվող «Վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության զարգացում. փուլ 3» վարկային ծրագրի միջոցներով տրամադրվող վարկի/լիզինգի տարեկան փաստացի տոկոսադրույքը չի կարող գերազանցել 10 %-ը:

4. Սահմանվում է լիզինգի առարկայի սեփականության իրավունքի փոխանցման վճար 5,000 ՀՀ դրամ:

5. ՀՄՀ միջոցներով, «Ագրոպարենային ոլորտի սարքավորումների և Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի սուբսիդավորման» ծրագրով տրամադրված վարկի/լիզինգի դեպքում՝ անկախ գումարից, վաղաժամկետ մարման տույժ չի գանձվում:
6. Եթե վարկի պայմանների վերանայումն իրականացվել է «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ նախաձեռնությամբ կամ դրա անհրաժեշտությունը առաջացել է տարերային աղետի հետևանքով, ապա վարկի պայմանների վերանայման միջնորդավճար չի պահանջվում:
Եթե գործող վարկի գրավի արգելանքից ազատումը, գրավի առարկայի փոփոխությունը, գրավի առարկայի սեփականատիրոջ փոփոխությունը և գրավի առարկային վերաբերվող այլ փոփոխություններն իրականացվում են «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ նախաձեռնությամբ, կամ գրավի առարկային վերաբերվող փոփոխության արդյունքում ընդլայնվում, կամ բարելավվում է գրավի առարկան, ապա դրանց գծով միջնորդավճար չի պահանջվում:
7. Պահանջվում է արտարժույթային վարկերի դեպքում, երբ հաճախորդը ցանկանում է վարկի գումարը ստանալ այլ բանկում, քան առաջարկվել է կազմակերպության կողմից:
* Ժամկետանց գումարների տույժը սահմանվում է 0.13 տոկոս օրական՝ ժամկետանց գումարի նկատմամբ (ժամկետանց մայր գումար և ժամկետանց տոկոսագումար, իսկ «Վարկ Աջակից» վարկատեսակի վարկերի դեպքում՝ նաև ժամկետանց սպասարկման վճար): Անընդհատ ժամկետանց օրերի քանակը 270 օրը գերազանցելու դեպքում տույժերի հաշվարկը դադարում է:
8. Բացառությամբ KfW-ի կողմից ֆինանսավորվող «Վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության զարգացում. փուլ 3» վարկային ծրագրի միջոցներով տրամադրվող վարկերի, մնացած վարկերի առավելագույն ժամկետը սահմանվում է 60 ամիս:

Քննարկեցին՝

ԳԳՏ տեղակալ / Գործառնական տնօրեն Մ. Պետրոսյան _____	ԳԳՏ տեղակալ / Վարկային տնօրեն Հ. Եղիազարյան _____	ԳԳՏ տեղակալ / Ֆինանսական տնօրեն Ա. Սարգսյան _____
Ներքին աուդիտի պետ Մ. Ավագյան _____	ԳԳՏ տեղակալ / Տարածքային զարգացման գծով տնօրեն Ա. Լոբյան _____	Գլխավոր հաշվապահ Հ. Հովհաննիսյան _____